ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«10» օգոստոս 2020թ. No 2688 - Լ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի 04-Ց ՑՈՒՑՈՒՄՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՆԿԱՏՄԱՄԲ ՊՈԼԻՄԵՐԱԶԱՅԻՆ ՇՂԹԱՅԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՄԵԹՈԴՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԱՆՄՈՒՇԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՏԵՂԵԿԱՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշման հավելվածով հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Առողջապահության նախարարի 2020թվականի մայիսի 13-ի թիվ 04-Ց ցուցումով սահմանված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություններ) կողմից կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) նկատմամբ պոլիմերազային շղթայական ռեակցիայի մեթոդով կատարվող լաբորատոր հետազոտության արդյունքի մասին տեղեկանքի (այսուհետ՝ տեղեկանք) ձևանմուշը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ներկայացնելու համար՝ համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) տեղեկանքը լրացվում է Կազմակերպությունների անվանմամբ եռալեզու ձևաթղթով և հաստատվում է Կազմակերպությունների կնիքով:

2) կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ պոլիմերազային շղթայական ռեակցիայի մեթոդով կատարված լաբորատոր հետազոտության արդյունքը դրական

կամ բացասական լինելու դեպքում տեղեկանքի համապատասխան դաշտում կատարվում է նշում:

3. Կազմակերպությունների տնօրեններին՝

1) ապահովել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ներկայացնելու համար կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ պոլիմերազային շղթայական ռեակցիայի մեթոդով լաբորատոր հետազոտության ենթարկված անձանց տեղեկանքի տրամադրումը Կազմակերպությունների անվանմամբ եռալեզու ձևաթղթով և հաստատված Կազմակերպությունների կնիքով՝ համաձայն սույն հրամանի հավելվածի:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումն Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանին:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված
Առողջապահության նախարարի
2020թ. օգոստոսի 10-ի թիվ 2688 - Լ հրամանի

ՏԵՂԵԿԱՆՔ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՆԿԱՏՄԱՄԲ ՊՈԼԻՄԵՐԱԶԱՅԻՆ ՇՂԹԱՅԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՄԵԹՈԴՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

СПРАВКА

О РЕЗУЛЬТАТЕ ОБСЛЕДОВАНИЯ НА КОРОНОВИРУСНУЮ БОЛЕЗНЬ ПЦР МЕТОДОМ

MEDICAL CERTIFICATE

OF TESTING FOR THE PRESENCE OF SARS-COV-2 BY PCR METHOD

Սույն տեղեկանքը տրվում է առ այն, որ
Данная справка выдана
This is to certify that

_____

(ԱԱՀ) (ФИО) (Name, Last name)

Ծնված

Дата рождения _____
Born (ծննդյան օր, ամիս, տարի) (день, месяц,год) (day,month,year)

_____ _____
(անձնագիր) (паспорт) (passport) (ՀԾՀ) (ном.знака об.услуг) (social services number)

հետազոտվել է SARS-CoV-2 նկատմամբ ՊՇՌ մեթոդով
был(а) обследован(а) SARS-CoV-2 ПЦР методом
has been tested for the presence of SARS-CoV-2 by PCR method

_____
(հետազոտության օր) (дата тестирования) (the day of test)

Արդյունքը հետազոտության օրվա դրությամբ
Результат на момент тестирования
Status report of infection on the date of the test

SARS-CoV-2

Դրական/Положительный/Positive: ☐
նշել/отметить/tick

Բացասական/Отрицательный/Negative: ☐
նշել/отметить/tick

(Ա.Ա. ստորագրություն, կնիք) (Ф.И. подпись, печать) (Signature and seal)

(Տրման ամսաթիվ) (Дата выдачи) (Date of issue